

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

N	Գործողություններ/միջոցառումներ	Ժամկետ
I. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
1.	Ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցերի համաձայն՝ կազմակերպել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների գիտելիքների միջկիսամյակային և կիսամյակային գնահատումները, հաստատել դրանց կատարման ժամանակացույցերը: Իրականացնել վերահսկողություն դրանց կատարման ուղղությամբ:	2021թ. հունվար-հունիս սեպտեմբեր-դեկտեմբեր
2.	Կազմակերպել ԲՊՀ-ի ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ներհամալսարանական և արտաքին տեղափոխությունների և շարժունության գործընթացը:	2021թ. հունվար-դեկտեմբեր
3.	Կազմակերպել ժամավճարային հիմունքով աշխատող դասախոսների հրամանագրում և հաշվառում, ամսական ծանրաբեռնվածության կատարողականի ստուգում:	2021թ. հունվար-հունիս սեպտեմբեր-դեկտեմբեր
4.	Կազմակերպել ՊԴ կազմի (այդ թվում օտարերկրացի դասախոսների) մրցութային ընտրության և թափուր պաշտոնների տեղակալման մրցույթները:	2021թ. մարտ-հունիս
5.	Կազմակերպել հաստիքային և պայմանագրային դասախոսների կիսամյակային, տարեկան բեռնվածությունների փոփոխությունների մասին փաստաթղթերի ընդունում, ստուգում և հրամանագրում:	2021թ. հունվար-հունիս
6.	Վարել ուսանողության շարժի էլեկտրոնային գրանցամատյանների աշխատանքները՝ ըստ ֆակուլտետների, կազմակերպել բակալավրիատի և մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ուսանողական համակազմի վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծություն՝ ըստ ուսուցման ձևերի, մասնագիտությունների, ֆակուլտետների, կուրսերի:	2021թ. հունվար-դեկտեմբեր
7.	Իրականացնել բուհի ՊԴ կազմի վերապատրաստում «Մուդլ» հարթակում	2021թ.

	էլեկտրոնային դասընթացների ստեղծման ուղղությամբ:	հունվար-դեկտեմբեր 2021թ. հունվար-դեկտեմբեր
8.	Շարունակել ըստ կրթական աստիճանների ԲՊՀ-ի ՄԿԾ-ների բազմազանեցման ուղղությամբ աշխատանքները. մասնավորապես, ելնելով կրթական պահանջարկից մշակել նոր ՄԿԾ-ներ և դասընթացներ այդ թվում՝ «Հայերենը՝ որպես օտար լեզու», «Հայերեն բանասիրություն», «Ոլորտային թարգմանություն», «Տեղեկատվության կառավարում/Գրականագիտություն», «Երկրագիտություն/տարածաշրջանագիտություն (Չինագիտություն)», «Համաժամանակյա թարգմանություն» և «Հաշվողական լեզվաբանություն»:	2021թ. մարտ-դեկտեմբեր
9.	Ուսումնասիրել դասավանդման ուսումնառության և հետազոտության ինտեգրման միջազգային փորձը, մշակել հետազոտական աշխատանք կատարելու այդ թվում՝ մագիստրոսական թեզ գրելու մոդուլ՝ ներդնելով այն ՄԿԾ-ներում և ստեղծել մեթոդական ուղեցույց:	2021թ. փետրվար - ապրիլ սեպտեմբեր - դեկտեմբեր
10.	Կատարել ուղղորդված աշխատանք հանրակրթական դպրոցների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների հետ (այցեր ՀՀ ավագ և միջնակարգ դպրոցներ, ավագ դասարանների աշակերտների համար ԲՊՀ շրջայցեր, խորհրդատվություններ և կարճատև դասընթացներ)՝ ԲՊՀ ընդունելության մակարդակի բարձրացման նպատակով:	2021թ. փետրվար - ապրիլ սեպտեմբեր - դեկտեմբեր
11.	Գործարկել e-buh համակարգը ուսանողների առաջադիմության տվյալների մուտքագրման և վերահսկողության գործընթացը կազակերպելու համար:	2021թ. հունվար-դեկտեմբեր
12.	Ընդլայնել շարունակական կրթության շրջանականերում առաջարկվող դասընթացների ցանկը հասարակության տարբեր խմբերի համար, վճարովի հիմունքներով կազմակերպել տարատեսակ դասընթացներ:	2021թ. փետրվար-դեկտեմբեր
13.	Իրականացնել դասախոսական կազմի պարբերական վերապատրաստումներ մասնագիտական, ՏՀՏ, էլեկտրոնային և հեռավար ուսուցման և այլ ուղղություններով՝ դասավանդման և ուսումնառության գործընթացներում էլեկտրոնային ռեսուրսների կիրառումը խթանելու համար:	2021թ. փետրվար -դեկտեմբեր
14.	Կազմակերպել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների մասնագիտական, մանկավարժական պրակտիկաները՝ ներառյալ դրանց մշտադիտարկման և գնահատման գործընթացները:	2021թ. փետրվար-մարտ հոկտեմբեր-նոյեմբեր
15.	Կազմակերպել և վերահսկել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա	2021թ.

	ուսուցման համակարգերի 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը:	փետրվար, մայիս-հունիս
16.	Ներկայացնել հաստատման ԲՊՀ-ի էլեկտրոնային ուսուցման կազակերպման և իրականացման կարգը:	2021թ. մարտ-մայիս
17.	Շարունական կրթության շրջանակներում մշակել տարբեր դասընթացներ և ռեսուրսներ հեռավար դասընթացներ իրականացնելու նպատակով:	2021թ. ապրիլ-դեկտեմբեր
18.	Պլանավորել 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական գործընթացը, հաշվարկել ամբիոնների և ԳՈՒԿ-երի ուսումնական բեռնվածությունը, դասախոսների անհատական բեռնվածությունները, ամբիոնների անձնագրերը:	2021թ. մայիս-օգոստոս
19.	Կազմակերպել և համակարգել 2021-2022 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելությունը և ուսանողների հրամանագրման գործընթացը:	2021թ. մայիս-հոկտեմբեր
20.	Ընդունել ամբիոնների և ԳՈՒԿ-երի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանները, դրանց կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները, ստուգել ամբիոնների և ԳՈՒԿ-երի 2020-2021 ուսումնական տարվա բեռնվածության կատարման հաշվետվությունները:	2021թ. հուլիս
21.	Հաստատել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգերի կիսամյակային դասացուցակները, իրականացնել մշտական վերահսկողություն դրանց կատարման ուղղությամբ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
22.	Ըստ ամբիոնների, ԳՈՒԿ-երի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական բեռնվածությունների տվյալների՝ ձևավորել ՊԴ կազմի հաստիքացուցակը:	2021թ. հուլիս-օգոստոս
23.	Մշակել և կիրառման մեջ դնել ԲՊՀ-ի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական գործունեության կազմակերպման ժամանակացույցերը:	2021թ. օգոստոս
24.	Կազմակերպել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 2021-2022 ուսումնական տարվա ընդունելությունը բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում (փաստաթղթերի հավաքագրում, առարկայական տարբերությունների հաշվարկում, կցագրման հրամանագրում):	2021թ. օգոստոս-սեպտեմբեր
25.	Ապահովել ՄԿԾ-ների և դասընթացների նկարագրերի, դասախոսությունների, ուսումնական տարաբնույթ նյութերի պարբերական համալրումը և առցանց հասանելիությունը ուսանողներին:	2021թ. սեպտեմբեր - դեկտեմբեր

26.	Կազմակերպել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի, ուսանողների կիսամյակային և տարեկան առաջադիմության ամփոփում, ըստ տարեկան առաջադիմության՝ իրականացնել փոխատեղման մրցույթներ:	2021թ. սեպտեմբեր- հոկտեմբեր
II. ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
1.	Ապահովել ԲՊՀ-ի գիտական հանդեսների հրատարակությունների համապատասխանությունը ՀՀ ԲՈԿ-ի և միջազգային շտեմարանների չափանիշներին ու պահանջներին:	2021թ. հունվար-դեկտեմբեր
2.	Ներդնել ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմներ, այդ թվում՝ հայաստանյան և արտասահմանյան գիտական ամսագրերում, պարբերականներում, ժողովածուներում հոդվածների, գիտահետազոտական նյութերի տպագրում, մասնակցություն ազգային ու միջազգային գիտական կոնֆերանսներին, արտասահմանյան վճարովի գիտական ամսագրերի հասանելիության ապահովում և այլն:	2021թ. փետրվար - դեկտեմբեր
3.	Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) կամ երիտասարդ գիտնականների խորհրդի (ԵԳԽ) աշխատանքները վերագործարկելու նպատակով մշակել դրանց բուհական և ֆակուլտետային կանոնակարգեր:	2021թ. ապրիլ - դեկտեմբեր
4.	Կազմակերպել սեմինար ՊԴ կազմի, դոկտորանտների, ասպիրանտների և հայցորդների համար՝ գիտական և գիտահետազոտական ծրագրերի մրցույթներին դիմելու ձևաչափերին և միջազգային վարկանշավորման շտեմարաններում հոդվածներ տպագրելու հմտություններին ծանոթացնելու նպատակով:	2021թ. հոկտեմբեր
5.	Հավաքագրել ԲՊՀ-ում հետբուհական կրթություն ստացած շրջանավարտների տվյալները:	2021թ. սեպտեմբեր - դեկտեմբեր
6.	Մշակել ԲՊՀ-ի ՊԴ կազմի, ամբիոնների, ԳՈՒԿ-երի գիտական գործունեության արդյունքների գնահատման ընթացակարգի նախագիծը:	2021թ. սեպտեմբեր - դեկտեմբեր
7.	Մշակել գիտահետազոտական ծրագրեր և ներկայացնել դրամաշնորհային	2021թ.

	Ֆինանսավորումն ապահովող ազգային և միջազգային մրցույթներին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտե՝ ֆինանսավորում ստանալու նպատակով:	հունվար - դեկտեմբեր
8.	Իրականացնել ԲՊՀ-ի գիտական պարբերականներում, ժողովածուներում և հանդեսներում ընդգրկվող հոդվածների գործընկերային գրախոսում:	2021թ. փետրվար - դեկտեմբեր
9.	Տպագրության ներկայացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքները քննարկել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ԲՊՀ-ի հրատարակչական խորհրդի երաշխավորմամբ:	2021թ. փետրվար - դեկտեմբեր
III. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ		
1.	<p>Բազմազանեցնել և ընդլայնել ԲՊՀ-ի միջազգայնացմանն ուղղված համալիր գործընթացները՝ ապահովելու բուհի շարունակական ակտիվ մասնակցությունը բարձրագույն կրթության եվրոպական և տարածաշրջանային ինտեգրման գործընթացներին և միջազգային բուհական ցանցերին.</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել արտասահմանյան համալսարանների միջազգայնացման փորձը, իրականացնել միջազգայնացման գործընթացների հենանշում, • մասնակցել արտասահմանյան կազմակերպությունների ֆինանսավորմամբ կարողությունների զարգացման ծրագրերին, • մշակել և ներկայացնել ծրագրային առաջարկներ ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող կրեդիտային շարժունության և այլ ծրագրերին, • շարունակել աշխատանքները գործող ներպետական և միջազգային ցանցային համագործակցության և անդամակցության շրջանակներում, մանավորապես՝ ԱՊՀ ցանցային համալսարանի, Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի, Մանկավարժական համալսարանների եվրասիական ասոցիացիայի և այլ կազմակերպությունների հետ, • ընդարձակել ԲՊՀ Կոնֆուցիուսի ինստիտուտի գործունեության շրջանակները՝ չինարենի ու չինական մշակույթի և չինագիտության ուսուցման ուղղությամբ: 	2021թ. հունվար-դեկտեմբեր
2.	<p>Ապահովել Բոլոնիայի գործընթացի նպատակների հետևողական իրագործումը ԲՊՀ-ում.</p> <ul style="list-style-type: none"> • ընդլայնել կնքված համաձայնագրերի շրջանակներում համագործակցությունը՝ օտարերկյա բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ, • աջակցել ԲՊՀ ամբիոններին կրեդիտային հենքով օտար լեզվով մոդուլների 	2021թ. հունվար-դեկտեմբեր

	<p>մշակման գործընթացում՝ օտարերկրյա ուսանողներին շարժունության և համատեղ կրթական ծրագրերով ներգրավելու նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> • նպաստել ուսանողների և աշխատակազմի մասնակցությանը փոխանակման և շարժունության ծրագրերին, արտասահմանյան պրակտիկաներին, • շարունակել համագործակցությունը տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ՝ համապատասխան լեզուների ուսուցումը բարելավելու նպատակով, • ամփոփել և ԲՊՀ-ի գիտական խորհրդին ներկայացնել ԲՊՀ-ի ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության կանոնակարգը: 	
3.	<p>Բարելավել օտարերկրյա ուսանողների ընդունելության և որակավորումների ճանաչման ծառայությունները.</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպել հարցում տեղացի և օտարերկրյա ուսանողների շրջանում՝ ԲՊՀ-ի կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ, • մշակել և ներկայացնել հաստատման օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ընդունելության ԲՊՀ կանոնակարգը: 	2021թ. հունվար-դեկտեմբեր
4.	<p>Շարունակել միջազգային կազմակերպությունների, այդ թվում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացումը: Մշակել նոր ծրագրեր՝ միտված ԲՊՀ-ի կարողությունների զարգացմանը:</p>	2021թ. հունվար-դեկտեմբեր
IV. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ		
1.	<p>Ստեղծել ՈԱ պատասխանատուների աշխատանքային խումբ ԲՊՀ-ի ստորաբաժանումների ներկայացուցիչներից, կազմակերպել որակի ապահովման վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումներ և վերապատրաստումներ ԲՊՀ-ի ստորաբաժանումների ներկայացուցիչների համար:</p>	2021 թ. մայիս-հուլիս
2.	<p>Մշակել ու գործարկել ՄԿԾ-ներով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների գնահատման մեթոդաբանություն:</p>	2021 թ. փետրվար-հունիս
3.	<p>Մշակել վարչական ու ՊԴ կազմերի կատարողականի գնահատման և մասնագիտական</p>	2021 թ. շարունակական

	զարգացման բազմագործոն համակարգ և համապատասխան մեխանիզմներ:	
4.	Ներգրավել ԲՊՀ-ի ներքին և արտաքին շահակիցներին բուհի կրթության ՈԱ գործընթացներում՝ ապահովելով մասնակցային որոշումների կայացումը և ընդունվող որոշումների ու դրանց իրականացման արդյունքների հրապարակայնությունը:	2021 թ. շարունակական
5.	<ul style="list-style-type: none"> Շարունակաբար իրականացնել ԲՊՀ-ի ՄԿԾ-ների ու կրթական ծառայությունների որակի գնահատմանն ուղղված միջոցառումներ՝ բուհի կառուցվածքային ստորաբաժանումների և արտաքին գործընկերների հետ սերտ համագործակցությամբ (3 ծրագրային փաթեթների գնահատում, վերանայում և բարելավում): Իրականացնել 3 թիրախային ՄԿԾ-ների (մանկավարժություն, տուրիզմ, լրագրություն մասնագիտություններ) վերաբերյալ հարցումներ ուսանողների շրջանում: 	2021 թ. փետրվար-հունիս մայիս-հունիս
6.	<ul style="list-style-type: none"> Վերամշակել արտաքին և ներքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումների բովանդակությունը՝ ԲՊՀ-ում առկա խնդիրների ու ձեռքբերումների վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու համար: Իրականացնել հարցում ԲՊՀ-ի ՊԴ կազմի շրջանում՝ օգտագործելով վերամշակված հարցաշարերը: 	2021 թ. փետրվար-դեկտեմբեր
7.	Մշակել գործատուների և աշխատաշուկայի ներկայացուցիչների կարիքների վերլուծության մեթոդաբանություն՝ Կարիերայի կենտրոնի հետ համագործակցությամբ կատարելով հարցում ԲՊՀ-ի շրջանավարտների շրջանում:	2021 թ. փետրվար-դեկտեմբեր
8.	Իրականացնել բենչմարքինգ բարձրագույն կրթության ՈԱ ոլորտում՝ ուսումնասիրելով ՀՀ և արտասահմանյան ընտրված բուհերում առկա տարբեր համակարգերը և դուրս բերել դրանց առավելություններն ու թերությունները՝ միտված ԲՊՀ ՈԱ համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը (2020 թ. բուհերի ՈԱ ոլորտում կատարված բենչմարքինգի արդյունքների ամփոփում):	2021 թ. փետրվար-մայիս

9.	Մշակել և հաստատել ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն և մեխանիզմներ (ՄԿԾ-ների բենչմարքինգի քաղաքականության և իրականացման ընթացակարգի մշակման աշխատանքների ամփոփում և հաստատում):	2021թ. փետրվար-ապրիլ
10.	Ապահովել ՈԱԿ-ի անձնակազմի մասնագիտական զարգացումը և իրականացնել ՈԱ-ի ոլորտին առնչվող գիտահետազոտական ուսումնասիրություններ:	2021 թ. շարունակական
11.	Ապահովել սովորողների մասնակցությունը կրթության բովանդակության ձևավորման, ՄԿԾ-ների վերանայման ու մշակման, կրթության որակի ապահովման գործընթացներին և ներգրավվածությունը կառավարման մարմիններին:	2021թ. հունվար-դեկտեմբեր
Վ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
1.	Շարունակել գրքային ֆոնդի հաշվառման աշխատանքները:	2021թ. հունվար-դեկտեմբեր
2.	Ուսումնասիրել գրադարանային գրքային ֆոնդը և վերհանել կարիքները և համալրել գրքային ֆոնդն անհրաժեշտ գրականությամբ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
3.	Ընդլայնել գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման համակարգի (KOHA) մոդուլների կիրառումը՝ <ul style="list-style-type: none"> • ԲՊՀ էլեկտրոնային գրացուցակի շարունակական համալրում, • համահայկական գրացուցակի շարունակական համալրում, • ընթերցողների էլ. գրանցում և սպասարկում, • բազմաբովանդակ հաշվետվությունների կազմում: 	2021թ. հունվար-դեկտեմբեր
4.	Շարունակել ԲՊՀ գրադարանի գրքերի թվայնացման աշխատանքները:	2021թ. հունվար-դեկտեմբեր
5.	Կազմակերպել գրադարանի ծառայություններից օգտվելու կարողությունների զարգացման դասընթացներ դասախոսների, ասպիրանտների և ուսանողների համար:	2021թ. հունվար-դեկտեմբեր
6.	Ձեռք բերել ծրագրային անհրաժեշտ փաթեթ և իրականացնել աշխատանքներ գիտական թվային պահոցի ստեղծման համար:	2021թ. հունվար-դեկտեմբեր

VI. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1.	Թարմացնել և լրամշակել էլեկտրոնային ուսուցման կառարավման համակարգերը, ավելացնել նոր ուսումնական մոդուլներ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
2.	Էլեկտրոնային ուսուցման համակարգին (http://elearning.brusov.am) զուգընթաց ուսումնական գործընթաց ներդնել Google ամպային տեխնոլոգիաները:	2021թ. հունվար-դեկտեմբեր
3.	Թարմացնել ուսանողների գնահատման էլեկտրոնային համակարգի տվյալների բազաները (http://exam.brusov.am), նորացնել գործող ծրագրային փաթեթը և համապատասխանեցնել գործող բազաները նոր համակարգին: Իրականացնել գործող թեստերի տեղափոխությունը նոր էլեկտրոնային թեստավորման համակարգ:	2021թ. մարտ-սեպտեմբեր
4.	Իրականացնել ուսանողների գնահատման էլեկտրոնային համակարգից օգտվելու ուղղությամբ ՊԴ կազմի վերապատրաստում:	2021թ. մարտ-դեկտեմբեր (շարունակական)
5.	Մշակել էլեկտրոնային ռեսուրսների մշակման մեթոդական ձեռնարկ:	2021թ. մարտ-հունիս
6.	Համալրել ԲՊՀ-ի համակարգչային և այլ սարքավորումները, նորացնել օպերացիոն համակարգերը և ծրագրային փաթեթները:	2021թ. հունվար-դեկտեմբեր
7.	Շարունակաբար թարմացնել և համալրել նոր նյութերով ԲՊՀ-ի կայքը (www.brusov.am) և ստորև բերված նրա ենթակայքերը՝ ապահովելով համալսարանի գործունեության լուսաբանումը. <ul style="list-style-type: none"> ✓ mul.brusov.am ✓ mail.brusov.am ✓ exam.brusov.am ✓ credit.brusov.am ✓ align.brusov.am ✓ elearning.brusov.am ✓ newmoodle.brusov.am և այլ: 	2021թ. հունվար-դեկտեմբեր
8.	Ապահովել ԲՊՀ-ի կապի բոլոր միջոցների անխափան աշխատանքը: Ընդլայնել մասնաշենքերի ուսումնական ու այլ տարածքների համացանցային անլար կապով	2021թ. հունվար-դեկտեմբեր

	ծածկույթը:	
9.	Իրականացնել համալսարանի 2021թ.-ի բոլոր միջոցառումների ֆոտովիդեո նկարահանում, գրանցում և արխիվացում: Իրականացնել 2021թ.-ի ամփոփիչ ատեստավորման քննությունների ծայնագրում և արխիվացում:	2021թ. հունվար-դեկտեմբեր
10.	Շարունակել միաժամանակյա թարգմանության լաբորատորիայի ստեղծման աշխատանքները:	2021թ. հունվար-դեկտեմբեր
11.	Սկսել ԲՊՀ-ի պատմության էլեկտրոնային թանգարանի ստեղծման աշխատանքները:	2021թ. փետրվար-դեկտեմբեր
VII. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ		
1.	Մշակել ԲՊՀ-ի հասարակայնության հետ կապերի հայեցակարգը:	2021թ. փետրվար-սեպտեմբեր
2.	ԲՊՀ-ի կայքը պարբերաբար համալրել և թարմացնել տարբեր ստորաբաժանումների մասին տեղեկատվությամբ, հրապարակել բոլոր հայտարարությունները, նորությունները, հաշվետվությունները և այլ տեղեկատվություն՝ բարձրացնելով ԲՊՀ-ի գործունեության թափանցիկությունը:	2021թ. հունվար-դեկտեմբեր
3.	2021-2022թթ. ուստարվա ընդունելությանն ընդառաջ պատրաստել և հեռարձակել դիմորդներին ուղղված տեսահոլովակներ ԲՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի, մասնագիտությունների, ինչպես նաև բուհի լայն համագործակցության շրջանակում ստեղծված հնարավորությունների վերաբերյալ:	2021թ. հունվար-մայիս
4.	Ապահովել ԲՊՀ-ի գործունեության լուսաբանումը տարբեր հարթակներում (բուհի պաշտոնական կայքում, սոցիալական մեդիաների կիրառմամբ, ավանդական ՋԼՄ-ներում ակտիվ լուսաբանումներով): Պահպանել մշտական կապ ՋԼՄ-երի հետ, հետևել համալսարանի մասին հրապարակումներին, ըստ անհրաժեշտության տալ պաշտոնական պարզաբանումներ, ինչպես նաև պատրաստել ու ՋԼՄ-երին տրամադրել ԲՊՀ-ի գործունեության ու միջոցառումների մասին տեղեկատվական նյութեր:	2021թ. հունվար-դեկտեմբեր
5.	ԲՊՀ-ի Կարիերայի կենտրոնի հետ համատեղ կազմակերպել հանդիպումներ հայտնի շրջանավարտների հետ:	2021թ. շարունակական

VIII. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.	Շարունակել աշխատանքները ֆինանսական հոսքերի ավելացման ուղղությամբ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
2.	Կազմել նոր դրամաշնորհային ծրագրեր և դիմել ֆինանսավորման:	2021թ. հունվար-դեկտեմբեր
3.	Շարունակել «Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի ստեղծում» ծրագիրը ներգրավելով ֆինանսական միջոցներ:	2021թ. հունվար-հուլիս
4.	Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը, կատարել հետևողական աշխատանք մասնավոր ոլորտի կազմակերպություններին, գործատուներին ուսումնական և այլ գործընթացներում ներգրավելու և լրացուցիչ մարդկային, ֆինանսական ու այլ ռեսուրսներ ներգրավելու ուղղությամբ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
5.	Իրականացնել միջոցառումներ և ծրագրեր ԲՊՀ-ի շրջանավարտների աջակցությամբ՝ ներգրավելով լրացուցիչ մարդկային, ֆինանսական և նյութական միջոցներ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
6.	Շարունակել վարել ԲՊՀ-ի անձեռնմխելի ֆոնդի համալրման քաղաքականություն:	2021թ. հունվար-դեկտեմբեր
7.	Իրականացնել շարունակական կրթական ծրագրերի իրականացում, այդ թվում պետական և այլ կազմակերպությունների կադրերի համար, ներգրավելով լրացուցիչ ֆինանսական միջոցներ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
8.	Իրականացնել կարճաժամկետ և միջնաժամկետ ծախսերի պլանավորում:	2021թ. օգոստոս-դեկտեմբեր
9.	Նախատեսել ծախսային հոդվածներ գիտական գործունեության խրախուսման համար:	2021թ. հունվար
10.	Ըստ անհրաժեշտության կատարել ԲՊՀ կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխություն:	2021թ. հունվար-դեկտեմբեր
11.	Բարելավել ԲՊՀ-ի հաշվետվությունների կազմման բովանդակային և ընթացակարգային մեխանիզմները և ապահովել ստորաբաժանումների կողմից հաշվետվությունների ժամանակին կազմումը:	2021թ. հունվար-դեկտեմբեր

12.	Իրականացնել ԲՊՀ թափուր հաստիքների տեղակալման մրցույթներ:	2021թ. փետրվար-դեկտեմբեր
13.	Մշակել և աշխատակիցներին առաջարկել բժշկական ապահովագրության փաթեթ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
IX. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ		
1.	Ըստ անհրաժեշտության մշակել կամ վերանայել հաստիքների աշխատանքային պարտականությունների նկարագրերը (պաշտոնի անձնագրեր) և ներառել դրանք աշխատողների հետ կնքվող պայմանագրերում:	2021
2.	Վերանայել ԲՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները:	2021-2022
3.	Իրականացնել տարբեր ուղղվածության մասնագիտական զարգացման և վերապատրաստման դասընթացներ ստորաբաժանումների ղեկավար և վարչական կազմերի համար:	2021-2022
4.	Գործարկել ԲՊՀ ներքին կառավարման տեղեկատվական համակարգը, իրականացնել վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում, վերլուծություն և ներկայացում՝ <ul style="list-style-type: none"> • ԲՊՀ հիմնադրամի կառավարման «ebuh» ավտոմատացված համակարգում պրոֆեսորադասախոսական կազմի անդամների անձնական, կոնտակտային և աշխատանքային տվյալների մուտքագրում ու ընթացիկ փոփոխությունների կատարում: • «Հայկական ծրագրեր» հաշվապահական ծրագրի «ՀԾ-կադրեր» բաժնի աշխատանքների իրականացում՝ նոր ընդունված և ազատված աշխատակիցների տվյալների մուտքագրում, աշխատանքային առաջադիմությունների (պաշտոնների, ստորաբաժանումների, դրույքաչափերի), ունակությունների (գիտական աստիճանների ու կոչումների) և ընթացիկ այլ փոփոխությունների կատարում: • Հաշվետվությունների ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը և վիճակագրական ծառայությանը: • Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» ՁԵՎ ԹԻՎ 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվություն: 	2021 մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը
5.	«Գիտատեխնիկական աշխատանքների կատարման մասին» ՁԵՎ1-ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	2021

	(տարեկան) վիճակագրական հաշվետվության:	փետրվարի 25
6.	«Լիցենզիա ստացած անձանց կողմից կրթական ծրագրերով լիցենզավորող մարմին ներկայացվող լիցենզավորված գործունեության մասին» տարեկան հաշվետվություն:	2021 օգոստոսի 31
7.	«Բարձրագույն մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մասին» ՁԵՎ 3-ԳՄ (տարեկան) վիճակագրական հաշվետվություն:	2012 հոկտեմբերի 5
X. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
1.	Գնել ԲՊՀ-ի 2021 թվականի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ համակարգչային և այլ սարքավորումներ, գրասենյակային, տնտեսական, շինարարական ապրանքներ և պարագաներ, վառելիք և այլ ապրանքներ, ձեռքբերել հակահրդեհային միջոցներ, տրանսպորտային միջոցների սպասարկման և այլ ծառայություններ:	2021թ. հունվար-դեկտեմբեր
2.	Իրականացնել ԲՊՀ-ի ենթակայության տակ գտնվող հանրակացարանի շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները:	2021թ. ընթացիկ
3.	ԲՊՀ-ի հիմնական մասնաշենքերի շենքային և սանիտարական պայմանների բարելավման նպատակով կատարել մասնակի վերանորոգում, սկսել 5-րդ հարկի շինարարական աշխատանքները:	2021թ. հունիս-սեպտեմբեր
4.	Կարգավորել ԲՊՀ-ի հանրակացարանում և հանգստյան տանը անվճար հիմունքներով բնակվող Արցախից տեղահանված անձանց կացության հետ կապված խնդիրները:	2021թ
XI. ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
1.	Անցկացնել ոսանողական խորհրդի նախագահի, ՍԳՍ, ԿՄՄ, ՌՕԼՖ, ԹՄՀ ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահների ընտրությունները:	2021թ. փետրվար-մարտ
2.	Կազմակերպել ԲՊՀ-ի 2020-2021 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման և ավարտական երեկոն:	2021թ. հուլիս
3.	Կազմակերպել և իրականացնել 2020-2021 ուսումնական տարում ԲՊՀ ընդունված ուսանողների համար տեղեկատվական և ճանաչողական միջոցառումներ, էքսկուրսիաներ:	2021թ. Օգոստոս -հոկտեմբեր
4.	Կազմակերպել ամանորին նվիրված ուսանողական երեկույթ:	2021թ. Դեկտեմբեր

5.	Կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ (աշխատաժողովներ, սեմինարներ, ցերեկույթներ, երեկոներ):	2021թ. Հունվար-դեկտեմբեր
XII. ՄՊՈՐՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ		
1.	Անցկացնել սեղանի թենիսի ուսանողական և դասախոսական ներբուհական առաջնություններ:	2021թ. մարտ-ապրիլ
2.	Անցկացնել վոլեյբոլի ուսանողական և դասախոսական ներբուհական առաջնություններ:	2021թ. մարտ-ապրիլ
3.	Անցկացնել շարժական ու էստաֆետային խաղերի ուսանողական և դասախոսական ներբուհական առաջնություններ:	2021թ. ապրիլ-մայիս
4.	Անցկացնել կրոսսավազքի միջբուհական առաջնություն:	2021թ. ապրիլ-մայիս
5.	Կազմակերպել էքսկուրսիաներ և էկո արշավներ ուսանողներին հայրենի բնությանը ծանոթացնելու նպատակով:	2021թ. ապրիլ-մայիս